



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10596

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՆՊՈՒՆԻԱՅԻ ԱՌԹԻՎ

ԿՈՍՅԵՐԻՏՍԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
1934 թ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՆՊԱՆԻԱՅՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
БОСХОБЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ЗКСМС

4-68

ՀՐԱՏ. 2.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ № 1

ՅԵՐԵՎԱՆ

1934

3KCM5

4-68

34-1
2234

24 SEP 2006
09 DEC 2009
CCCP

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Սորհուրդների հաշվետու-վերջնորական կամպանիան խոչոք քաղաքական կարևորութիւն ունեցող կամպանիա չէ: Միլիոնավոր բանվորներ, կոլտնտեսականներ, աշխատավորներ մասնակցելու յեն պրոլետարական դիկտատուրայի որդանների- իսորհուրդների վերջնորութիւնը: Լենինյան կոմյերիտմիութիւնն ակտիվ մասնակցութիւն պետք է ունենա այդ կամպանիային, ոգնելով կուսակցութիւնն ու կառավարութիւնը լավագույն կերպով, աշխատավոր մասսաների առավելագույն ակտիվութիւնը, անցկացնելու պրոլետարական դիկտատուրայի որդանների հաշվետվութիւնն ու վերջնորութիւնը: Հայաստանի կոմյերիտմիութիւն համար այս կամպանիան պետք է հանդիսան լուրջ քաղաքական ստուգում, վորը պիտի ցույց տա, թե վորքանով է մեր կազմակերպութիւնը դարձել պետական բազմակողմանի գործունէյութիւնը: Այս կամպանիայի ընթացքում մեր կազմակերպութիւնները պետք է հետապնդեն, վորպեսզի ել ավելի բարձրանա կոմյերիտմիութիւն ակտիվ մասնակցութիւնը պետա-

Սրբազրիչ Ա. Հախվերդյան

Գլավիտ 509 Գատեր 1398 Տիրաթ 2500

Յերեվան - Գեորգիատր տպարան

կան շինարարութեանը, խորհրդային մարմիններին աշխատանքի բարելավման ու ճկունացման գործին, բյուրոկրատիզմի, քաշքշուկի դեմ տարվող պայքարի:

ՀԼԿՑԵՄ կենտկոմը գտնում է անհրաժեշտ.—

1. Բոլոր շրջաններում առաջիկա միասնական որ՝ նվիրել խորհուրդների հաշվետու վերընտրական կամպանիային ու կոմյերիտմիութեան խնդիրներին:

2. Կոմյերիտականների և արտամիութենական յերիտասարդութեան ժողովներում լսել խորհուրդների կոմյերիտական, յերիտասարդ պատգամավորների հաշվետու զեկուցումները խորհուրդներում իրենց կատարած աշխատանքի մասին:

3. Բոլոր կոմյերիտական կազմակերպութեանները պարտավոր են իրենց պրոպագանդիստներով ու ակտիվիստներով ոգնել խորհուրդներին՝ վերընտրական կամպանիայի առընչութեամբ ակումբներում, խրճիթ ընթերցարաններում, կոլտնտեսային բրիգադներում և այլն մասսայական-բացատրական աշխատանք ծավալելու համար:

4. Խորհուրդների համագումարին պատրաստվելու նշանաբանով գյուղերում, շրջանային կենտրոններում պատրաստել և կահավորել սպորտ հրապարակներ, գործնական աշխատանք ծավալել յերիտասարդութեան կուլտուրական կազմակերպման

համար, ներգրավելով այդ աշխատանքին տեղական խորհուրդներին ու այլ կազմակերպութեաններին:

5. «Թեթև հեծելազորի» միջոցով կազմակերպել լայն աջակցութեան ընտրական հանձնաժողովներին, ձայնազուրկներին հայտընարեբելու, ընտրական ցուցակները ճիշտ կազմելու գործին:

6. Կոմյերիտական բոլոր կազմակերպութեանները պետք է ակտիվ մասնակցութեան ունենան խորհուրդների պատգամավորներին տրվող նակազները կազմելու աշխատանքին, մտցնելով յերիտասարդութեան կենցաղի, ուսման, նրա աճող կուլտուրական պահանջների հետագա բավարարման առթիվ կոնկրետ պարտավորութեաններ: ՀԿՑԵՄ բոլոր կազմակերպութեանները պետք է լայն բացատրական աշխատանքի միջոցով ապահովեն ընտրողների լիովին մասնակցութեանը. ընտրական ժողովներին, այդ նպատակով ընտրութեանների որն ակտիվիստների բրիգադներ ուղարկելով թաղամասերը, տները կազմակերպելով մեկ որյա մսուրներ և այլն:

7. Կոմյերիտական բոլոր կազմակերպութեանները պիտի պայքարեն ապահովելու համար խորհուրդների պատգամավորների կազմում յերիտասարդների թվի ընդարձակումը, ի հաշիվ լավագույն յերիտասարդ հարվածայինների և կոմյերիտականների:



60210.67

ԿՐՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՐԸ 1934 Թ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ

Խորհուրդների ընտրութիւնները ամենամասսայական և կարեւորագույն քաղաքական կամպանիան ե: Խորհուրդների ընտրութիւնները ընդգրկում են տասնյակ միլիոնավոր աշխատավորներ, բառի բուն նշանակութեամբ վերելք և աշխուժութիւն են առաջ բերում ժողովրդատնտեսական շինարարութեան բոլոր ճյուղերում, նպաստում են պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների ուժեղացմանը, վերակազմութեանը և ամրապնդմանը, նոր բարձրութեան վրա են կանգնեցնում մասսաների քաղաքական և արտադրական ակտիւնութիւնը, լայնորեն ծավալում են խորհրդային ինքնաքննադատութիւնն ու դեմոկրատիան:

Արդեն 1930-31 թվի ընտրական կամպանիային կոմյերիտմիութիւնը շատ լրջութեամբ լծվեց գործի: Կոմյերիտմիութեան մի շարք տեղական կազմակերպութիւններ կարողացան խորհուրդներին և ընտրական կոմիտեաներին ոգնելու պրակտիկ ձեւեր գտնել խորհուրդների ընտրութիւնները պատրաստելու և անցկացնելու միջոցին: Այսպէս որինակ՝ կոմ-

սոմիլի Պսկովյան շրջկոմը կազմակերպեց մի շարք կոմյերիտական բրիգադներ՝ քաղաքային ընտրական հանձնաժողովին ոգնութիւն ցույց տալու խորհուրդների կատարած աշխատանքների հայտնաբերման, ընտրողների նահանգների կատարման աստիճանը պարզելու, ձայնազուրկների ցուցակները կազմելու համար և այլն: Կորոստինում (ՈՒՆՍՉ) կոմյերիտմիութեան շրջկոմը սոցիալիստական մրցման դուրս յեկավ հարեան շրջանի հետ ընտրական կամպանիային և մասսայական աշխատանքներին լավագույն կերպով սպասարկելու համար: Գյուղերն ուղարկվեցին կոմյերիտական բրիգադներ: Կոմյերիտականները ոգնում էին ընտրական հանձնաժողովին ցուցակագրման կամպանիայի, ընտրական քարտերը լրացնելու գործում և ընտրական և հաշվետու ժողովների կուլտուրական սպասարկմանը:

Ջանկոյում (Ղրիմ) կոմյերիտմիութեան շրջկոմը տասը գյուղական ընտրական հանձնաժողովների շեֆութիւնը վերցրեց իր վրա, հրավերեց գյուղխորհուրդների նախագահների, ընտրական կոմիտեաների, և կոմյերիտական բջիջների քարտուղարների խորհրդակցութիւն: Շատ կոմյերիտականներ իրենց հերթին մրցութեան մեջ մտան ընտրողների մասնակցութիւնը կազմակերպելու, հաշվետու և ընտրական ժողովների նախապատրաստման ու

հրավիրման, մասսայական աշխատանքի ծա-
վարման, խորհուրդների աշխատանքների
ոտուղման համար և այլն:

Հայաստանում ամբողջ հիմնական կոմյե-
րիտական կազմը խորհուրդների ընտրություն-
ների ընթացքում գլուղ եր ուղարկվել: Գյուղի
կոմյեռիտականներով և ակտիվ յերիտասար-
գության ուժերով լայն բացատրական աշխա-
տանք եր տարվել յերիտասարգության, չքա-
վորության և բատրակության չրջանում,
գյուխորհուրդներում կազմակերպվել են տե-
ղեկատու սեղաններ, ազիտ-խրճիթներ, հեր-
թապահություններ: Կոմյեռիտականները մաս-
նակցում եյին ձայնագուրկների հայտնաբեր-
մանը, պլակատների տարածմանը, և ժողով-
ների ծանուցումների առազմանը և այլն:

Սակայն առաջավոր կոմյեռիտական կազ-
մակերպությունների հետ միասին, վորոնք
գործոն աշխատանք եյին ծավալել խորհուրդ-
ների վերընտրությունները նախապատրաստե-
լու և կատարելու գործում, մի շարք կազմա-
կերպություններ քարչ եյին գալիս պոչից և
անկարող յեղան յերեսները դարձնել դեպի
վերընտրական կամպանիան:

Կոմյեռիտական կազմակերպությունների
այդ հետ մնալը կարեվորագույն քաղաքական,
մասսայական կամպանիան անցկացնելու գոր-
ծում միանգամայն անթույլատրելի յե, մանա-
վանդ այն խնդիրների հանդեպ, վորոնք կանդ-

նած են 1934 թ. ընտրական կամպանիայի ա-
ռաջ:

Խորհուրդների ընտրությունները 1934
թ., վոր կատարվում են 2-րդ հնգամյակի 3-րդ
տարվա չեմքին, պետք ե նպաստեն 1934 թ.
ժողովրդատնտեսական պլանի հաջող ավարտ-
մանը և այդպիսով ապահովեն դեպի նոր տըն-
տեսական տարին տանող մատույցները: Նը-
րաք յերկրին պիտի տան խորհուրդների այն-
պիսի կազմ, վորի աշխատանքը մեր կուսակ-
ցության ղեկավարությամբ հասցներ մեր
յերկրում սոցիալիզմի կառուցման մեծ պլանի
հաջող իրագործմանը և նրա պաշտպանունա-
կության ամրապնդմանը:

Ահա թե ինչով ե վորոչվում այս տարվա
ընտրական կամպանիայի բացառիկ նշանակու-
թյունը, ահա թե ինչու ամբողջ Աենինյան կոմ-
յերիտմիությունը, կուսակցության այդ ա-
մենամերձավոր ոգնականը, ամենաակտիվ
ծավալուն մասնակցություն պիտի ունենա
նրանում:

Գործնականորեն կոմյեռիտմիությունյ
ինչպե՞ս պետք ե լծվի այդ կամպանիային:
վոր պիտի լինի նրա պրակտիկ աշխատանքը
այդ ճակատում:

Համաձայն ընտրական որենսդրության
կոմյեռիտմիության ներկայացուցիչները մըտ-
նում են այն ընտրական հանձնաժողովների
կազմի մեջ, վոր կազմվում են գործադիր կո-

միտեններին կից խորհուրդները ընտրություններն անցկացնելու համար:

Նշահուում ե կոմյերիտական կազմակերպությունների առաջին խնդիրն ե հանձնաժողովներն ուղարկվող կոմյերիտական քեկնածուների ամենամանրազննիքն ընտրությունը, վորպեսզի այնտեղ ընկնեն իսկապես ամենից ավելի տոկոսն, քաղաքականապես զարգացած, մասսայական աշխատանքի փորձ ունեցող դասակարգայնորեն կոմիւստիստ ընկերներ:

Նրանց կչադկապեն կոմյերիտական կազմակերպությունները ընտրական կոմիտենների հետ, ընտրություններում կլինեն ոպերատիվ աշխատակիցներ, ընտրական կոմիտենների լաւագույն ոգնականները նրանց աշխատանքում: Կոմյերիտմիության տեղական կազմակերպությունները պետք ե ստուգեն նրանց աշխատանքն ընտրական կոմիտեններում, բայց միևնույն ժամանակ հիշեն, վոր ընտրություններին կոմյերիտմիության մասնակցության համար պատասխանատու յե մոչ միայն կազմակերպության ջոկած ընտրական կոմիտեյի անդամը, այլ ե ամբողջ կազմակերպությունը միասին առած: Այդ քիչ ե, չբավականանալով իր ներկայացուցիչը տալով ընտրական կոմիտեյին, կոմյերիտմիության կազմակերպությունը պետք ե մասնակցություն ունենա ընտրական կոմիտենների ամբողջ կազմի ընտրությանը, այն կազմի

ստուգմանը, վոր կատարելու յեն ռայոնական կազմակերպությունները: Ընտրական կոմիտենների, ընտրական կամպանիայի այդ հիմնական ոպերատիվ շտաբները, կազմը պետք ե զտված լինի դասակարգայնորեն խորթ տարրերից ե նրանց գործակցող — սպորտուսուստներից, անգործունյա ե անաշխատունակ մարդկանցից: Դա ընտրությունների հաջողության հիմնական պայմանն ե:

Կարևորագույն նշանակություն ունի կոմյերիտմիության լայն մասնակցությունը այն կազմակերպչական-բացաւորական աշխատանքում, վոր անց ե կացվում խորհուրդների ընտրություններին նախապատրաստելու կարգով: Անհրաժեշտ ե մորլիզիացիայի յենթարկել կոմյերիտականների ամբողջ 4 ու կես միլիոնանոց մասսան, ընդգրկել ամբողջ քաղաքային ե դյուղական աշխատավոր յերիտասարդությունը, ոգտագործել կոմյերիտմիության առաջատար դերը, նրա հազիւն ազիտատորական ուժերը, կազմակերպչական հնարավորությունները, վորպեսզի բացատրական աշխատանքով կարելի լինի ընդգրկել խորհուրդների-ընտրություններին մասնակցող ամբողջ ընտրող մասսան ե այդպիսով բարձրացնել նրանց քաղաքական ակտիվությունը:

Բացատրական աշխատանքի հանդուցակետերը պետք ե լինեն կուսակցության 17-րդ համագումարի վերջումները՝ ժողովրդական

տնտեսութեան հետագա շինարարութեան մասին և ընտրական որեւնքը: Մասնավորապես անհրաժեշտ է ոգտագործել ընտրական կամպանիան կոմյերիտմիութեան և յերիտասարգութեան այն պրակտիկ խնդիրներէ լայն մաս սայականացման և բացատրման համար, վորոնք բղխում են Համ Կ(բ)Կ-ի 17-րդ համագումարի վորոշումներէց: Այդ բոլոր աշխատանքը հարկավոր է սերտորեն շողկապել մասսաների արտադրական ակտիվութեան նոր ալիքներէ կազմակերպման հետ կուսակցութեան 17-րդ համագումարի վորոշումները լավագույն կերպով, կատարելու համար, 1934 թ. տնտեսական տարվա լավագույն ավարտման համար:

Ազիտացիոն բացատրական աշխատանքի մեթոդները մեզ թեւադրում են խորհուրդներէ անցյալ ընտրութեանները և կոմյերիտական կազմակերպութեաններէ վերջին ընտրութեաններէ հետո յեղած ժամանակամիջոցում ձեռք բերված ամբողջ հարուստ փորձը: Զրույցներ ցելում, հերթափոխում, կոլտընտեսական բրիգադում, հիմնարկութեաններէ աշխատակիցներէ ընդահնուր ժողովները, կոմյերիտականների հավաքույթները յերիտասարգութեան հետ, խորհուրդներէ ընտրութեաններին նվիրված ինքնագործունեյութեան հատուկ յերեկույթների կազմակերպում, ազիտացիոն կառնավալները, կոլտնտե-

սութեաններ շրջագայելը և այլն: Անսպառ են այն միջոցները, վորոնց տիրապետում է դրա համար կոմյերիտմիութեանը և այդ ամենը թվելու հարկ ու հնարավորութեան չկա:

Կոմյերիտմիութեան ազիտացիոն աշխատանքը պետք է սերտորեն կապված լինի լայն սոցիալիստական մրցման և հարվածայնութեան զարգացման հետ, իբրև պրոլետարական դեմոկրատիայի բարձր ձևերի—վոչ միայն կոմյերիտմիութեան և յերիտասարգութեան շրջանում, այլև բանվորների ու կոլտնտեսականների ամբողջ մասսայում:

Գործարանում, կոլտնտեսութեան մեջ, խորտնտեսութեաններում, տնայնագործական արտելներում, հանքերում, շինարարութեան մեջ յերկաթուղային տրանսպորտում, կոմմունալ ձեռնարկութեաններում— ամեն տեղ էլ նրանք պիտի դառնան ԽՍՀ Միութեան խորհուրդների 7-րդ համագումարի անվան արտադրական սոցմրցման և հարվածայնութեան նոր ալիքների նախաձեռնողները— 1934 թ. 4-րդ կվարտալի և ամբողջ տարվա Ֆինպլանների կատարման, կոլխոզների կազմակերպչորեն ու տնտեսապես ամբացման, բերքահավաքի հաջող ավարտման և պետութեանը հանձնման, արտադրանքի ու աշխատանքների լավ վորակի, նրանց արժեքի եժանացման համար, սոցմրցումը հարկավոր է զարգացնել աշխատանքի և սոցիալիստական դիսցիպլինայի լավագույն

կաղմակերպման ուղղութիւնը, պրոպագանդան, անշնորքութեան, խոտան անողների դեմ պայքարելով, սոցիալիստական սեփականութեան լավագույն պահպանութեան, լավագույն արտադրական տեխնիկական ուսուցման դժով, հասարակական տեխնիկական քննութիւնների կոմյերիտմիութեան առաջադրած մասսաների արտադրական ակտիվութեան այդ կարևորագույն ձևի—լավագույն արդյունքների համար:

Դրա հետ միասին կոմյերիտմիութիւնը պետք է նախաձեռնողը դառնա նույնպես խորհուրդների ընտրութիւնները լավագույն, որինակելի ձևով անցկացնելու գործում լայն սոցիալիստական մրցման, հաշվետու և ընտրական ժողովներին բողոքով ներկայանալու, գեկուցումների քննութեան մեջ մեծ ակտիվութիւն ցուցաբերելու, նակազների վերաբերմամբ մեծ թիվով առաջարկներ անելու, թեկնածութիւնների լավագույն ընտրութիւն կատարելու մեջ և այլն:

Կոմյերիտական կազմակերպութիւնները, մանավանդ խորհուրդներում աշխատող կոմյերիտականները և խորհրդային ակտիվիստները, մանավանդ խորհուրդներում աշխատող կոմյերիտականները և խորհրդային ակտիվները, պետք է ուժեղացնեն իրենց մասնակցութիւնը խորհուրդների համամիութենական ճյուղային կոնկուրաներում, խորհուրդ

ների մրցութեան մեջ, իսկ շրջործկոմներում և ռայոնական բաժիններում աշխատող կոմյերիտականները խորհուրդներին ու նրանց սեկցիաներին աշխուժ ոգնութիւն ցույց տալու, խորհուրդների լավագույն կազմակերպչական ղեկավարութեան, նրանց աշխատանքի հաշվառման փորձերի փոխանակման մեջ:

Վերջապես սոցիալիստական մրցումը և հարվածայնութիւնը պետք է ընդգրկեն նույնպես կոմյերիտական աշխատանքի ներքին հարցերը. մրցումը լավագույն կուս ուսուցման, պետական կառուցվածքի հիմունքների ուսումնասիրման (սահմանադրութեան և ընտրական որենքների, կուս. բեռնավորումների կատարման, պիոներ-չարժման ղեկավարման համար և այլն):

Վորպեսզի այդ մրցումը չլինի լոկ թղթի վրա, հարկավոր է նրա բոլոր ճյուղերում սահմանել կոնկրետ ցուցանիշներ և սիստեմատիկաբար կազմակերպել ստանձնած պարտավորութիւնների կատարման հասարակական ստուգում:

Կոմյերիտմիութենական կազմակերպութիւնները մեծ ուշադրութիւն պիտի նվիրեն ընտրական կոմիտեներին ոգնելու՝ ընտրողների և ընտրական իրավունքներից գրկվածների ցուցակները կազմելու աշխատանքների կատարման մեջ: Խորհուրդների վերջին ընտրութիւններից հետո անցած ժամանակամիջոցում

յերկրում տեղի ունեցան իսկապես վոր պատմական տեղաշարժեր: Մեր արդյունաբերութեան վերակառուցումը և կոլլեկտիվացման վերջնական հաղթանակը փոխեցին ընտրողների առանձին կատեգորիաների փոխհարաբերութիւնը: Աճեցին ու ամրացան կազմակերպված պրոլետարիատի շարքերը: Բանվորների թիվն ավելացավ շատ միլիոններով:

Կուսակցութեան և խորհուրդների ամուր հենարան է կազմում գյուղում կոլտնտեսական բազմամիլիոն ակտիվը: Այդ բոլոր փոփոխութիւնները իրենց անդրադարձումը պիտի գտնեն ընտրողների հաշվառման ժամանակ: Մյուս կողմից, անհրաժեշտ է դասակարգային զգոնութեամբ ամբողջ ուժով մոտենալ ձայնադուրկների ցուցակները կազմելուն, վորպեսզի նրանք, ում մեր սահմանադրութիւնը և ընտրական որենքը զրկում են ընտրութիւններին մասակցելու իրավունքից, խորամանկութեամբ, ալյասերվածների հետ ունեցած իրենց կապերն ոգտադործելով մուտք չգործեն ընտրողների շարքերը:

Կոմյերիտմիութիւնը պետք է մասնակցեցուցակագրման կամպանիային ոժանդակող բրիգադներին, տեղեկացնելով ընտրական որենքի խախտման բոլոր դեպքերի մասին, դասակարգային թշնամիների դավերի մասին, ընտրական, կոմիտեյի հանձնարարութեամբ ստուգել ընտրական իրավունքից սխալմամբ

զրկելու, իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումները, տեղերում քննութիւններ կատարել և այլն: Հարկավոր է հիշել, վոր այդ աշխատանքի ճիշտ կիրառումը քաղաքական խոշոր նշանակութիւն ունի և, յերևան հանելու ձայնադուրկների ներացման դեպքերը ընտրողների կազմի մեջ, պետք է միաժամանակ հետևել, վորպեսզի հեղափոխական որինականութիւնը և աշխատավորների որինական շահերի պաշտպանութիւնը խիստ կերպով պահպանվի:

Վերջապես, այդ բոլոր ցուցակների կազմելը ինքստինքյան տեխնիկապես այնքան դժվարին գործ է, վոր գյուղխորհուրդների ապարտը դժվար կարող է կատարել առանց աջակցութեան: Ուստի կոմյերիտական կազմակերպութիւնները պետք է կազմակերպեն նույնպես այդ ցուցակները կազմելու և բազմացնելու տեխնիկական ոգնութիւնը և այլն:

Խորհուրդների ընտրութեան ամբողջ նախապատրաստական աշխատանքի կենտրոնական ողակը հաշվետու ստուգողական կամպանիան է: Նրա նպատակն է՝ հասարակական ստուգման, յենթարկել, խորհրդային ինքնաքննադատութեան կրակին յենթարկել խորհուրդների ամբողջ աշխատանքը, յերևան հանել նրանց աշխատանքում յեղած թերութիւնները, ողնել խորհուրդներին ուղղելու այդ բացերը և մասսաների կողմից խորհուրդներ

60210.67



րի ամբողջ աշխատանքը դնել նոր բարձրության վրա:

Այստեղից ել բղխում են ԼԿՅԵՄ-ի անելիքները: Խորհուրդների աշխատանքի ստուգումը իրականացվում է գյուղխորհուրդների ընտրովի վերստուգիչ հանձնաժողովների միջոցով, խորհրդային ակտիվի այդ և գյուղական հասարակայնության ներկայացուցիչների մասնակցութամբ:

Գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անդամների մեջ կան 6,4 տակոսից ավելի կոմյերիտականներ: Նրանք առաջին հերթին պարտավոր են որինակ ծառայել հանձնաժողովի բոլոր անդամներին խորհուրդների աշխատանքի ակտիվ ու մանրագնին ստուգման, նրա թերություններն ու բացերը հայտնաբերելու, առաջարկների մշակման և այդ առաջարկները կյանքում իրագործելու հարցերում:

Հատուկ խնդիրներ են ծանրանում նույնպես «թեթև հեծելազորի» վրա: Նա պարտավոր է մասնակցել գյուղական խորհուրդների և գյուղական տնտեսական ու կուլտ կենցաղային կազմակերպությունների հետագոտմանը, ոգնելով վերստուգիչ հանձնաժողովներին իրենց աշխատանքում:

Այդ բավական չէ. կոմյերիտիությունը պետք է հսկողի և կազմակերպողի դեր էլ խաղա ինֆնաֆննադատությունը խորհուրդների հաշվետու ժողովներում գարգացնելու գոր-

ծում, մոբիլիզացիայի յենթարկելով մասսաներին ժողովներին բոլորով ներկայանալու համար: Այդ աշխատանքում անհրաժեշտ է ոգտագործել մասսաների ակտիվությունը բարձրացնելու մեթոդները, վորոնք կիրառվում էին անցյալ կամպանիային (տները շրջագայելը կազմակերպված ներկայանալու համար և այլն):

Մեզ հարկավոր է վոչ ամեն տեսակի ակտիվություն, վոչ քննադատություն քննադատության համար: Կոմյերիտականները պետք է առաջնորդող դեր խաղան, հանդես գալով գործի մասին ըստեյության, գործնականորեն վերլուծելով խորհուրդների աշխատանքը, խիստ դիմադրություն ցույց տալով դասակարգային թշնամուն աջակցողների դեմագոգիական յելույթներին, վորոնք փորձում են խորհուրդների վրա չարամիտ զրպարտություններ անելով վայր գցել պրոլետարական դիկտատուրայի մարմինների հեղինակությունը:

Միևնույն ժամանակ կոմյերիտիությունը պետք է առաջինը ձայն բարձրացնի խորհուրդների կազմից անգործունյա անդամներին, ոպորտունիստներին, և դասակարգային թշնամուն աջակցողներին հետ կանչելու մասին, վորոնք տեղ-տեղ արդեն մուտք են գործել խորհուրդների մեջ:

Հաշվետու ստուգողական աշխատանքը

պետք է լայն կերպով ոգտագործվի ամենուրեք կազմակերպելու խորհուրդների անդամների ու նախագահների հաշվետվութունները, խորհուրդների սեկցիաների նախագահների հաշվետվութունը ընտրողների առաջ (ընդհանուր ժողովներում, ցեխերում, հերթափոխերում, կոլտնտեսային բրիգադներում և այլն) և նրանց աշխատանքի հասարակական գնահատականը:

Հաշվետու ստուգողական աշխատանքը կոմյերիտմիությունը պետք է ոգտագործի նրա համար, վորպեսզի ընտրական կոմիտեների ղեկավարութամբ «թեթև հեծելազորի» միջոցով հասարակական ստուգում կազմակերպի պարզելու թե այս կամ այն հիմնարկությունը առանձին կամ տեսչությունները վոր չափով են պատրաստ խորհուրդների ընտրություններին, ու նաև ստուգի նախապատրաստական աշխատանքի վորակը նրա բոլոր ողակներում:

Անմիջականորեն հաշվետու ստուգողական աշխատանքի հետ է շաղկապված կոմյերիտմիության մասնակցությունը ընտրողների կողմից խորհուրդների նոր կազմին արվելիք նակագները պատրաստելու գործում:

Այդ նակագները գործնական ծրագիր են հանդիսանում խորհուրդների նոր կազմի աշխատանքի համար: Նրանք ամբողջովին պետք է արտահայտեն կուսակցության գլխավոր

գիծը, կազմակերպեն մասսաները կուսակցության և կառավարության վորոշումները գործնականորեն իրականացնելու համար:

Նակագների քննարկումը կիրառվելու յե ամենուրեք բանվորները կոլեկտիվներում, կոլտնտեսականների ժողովներում, հիմնարկություններում: Կոմյերիտմիությունը պետք է դառնա նակագների վերաբերյալ տեղական գործունեյությունից բղխող պրակտիկ առաջարկների հավաքման կազմակերպողը, վորոնք անդրադարձնում են յերկրի շինարարությանն ու կառավարմանը մասակցող մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը: Կոմյերիտմիությունը պետք է կազմակերպե արտադրության բարելավման և մասսաների կուլտուրկենցաղային սպասարկման վերաբերյալ ոացինալացման և գյուտարարական առաջարկների հավաքման գործը:

Դրա հետ միասին կոմյերիտմիությունը «թեթև հեծելազորի» միջոցով պետք է մասնակցե խորհուրդների կողմից ընտրողների անցյալ նակագի կատարման հասարակական ստուգմանը, պարզ է թե այդ նակագի վոր կետերը չեն կատարված և ինչու, նակագի վոր կետերը կարելի է և պետք է մտցնել նոր նակագի մեջ:

Շարժման մեջ դնել ընտրողների ամբողջ մասսան, նակագներում տալ նրա տնտեսական շինարարության հանրագումարը, հաշվի առնել

և ողտագործել նրա առաջարկները խորհուրդների և խորհրդային կազմակերպությունների աշխատանքը բարելավելու, աշխատանքները մեր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և խորհրդանտեսություններում ավելի լավ հիմունքների վրա դնելը կլինի կազմավորագույն ծառայությունը, լավագույն մուծանքը սցիալիզմի շինարություն գործում:

Կոմյերիտամիությունը իր ուշադրությունը պիտի կենտրոնացնե խորհուրդների նոր կազմի քեկնածուների նախապատրաստման վրա:

Մենք ունենք կուսակցություն ցուցմունքները, թե ումնից պետք է վերցնել հիմնականում այդ թեկնածությունները— դրանք բանվորներն ու բանվորուհիներն են— սոցիալիստական արտադրության, տրանսպորտի, կոմունալ ձեռնարկությունների հարվածայինները և այլն: Դրանք առաջավոր կոլտնտեսականներն են և կոլտնտեսուհիները— սոցիալիստական դաշտերի հարվածայինները, կոլտնտեսական գյուղի լավագույն հասարակական գործիչները, գյուղական խորհրդային ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները:

Կոմյերիտական կազմակերպությունները տեղերում իրենց բոլոր ուժերով, հեղինակությունամբ ու ազդեցությունամբ պիտի ապահովեն կուսակցության տված այդ ցուցմունքների կատարումը: Խորհուրդների կազմը պիտի լի-

նի աշխատունակ, դասակարգայնորեն կայուն, կոլտնտեսությունը ծանոթ, գործնականորեն նրան ղեկավարելու ընդունակ: Խորհուրդների կազմում կարող են լինել միայն այն բանվոր կոլտնտեսականները, վորոնք ղեկավարող դեր են խաղում իրենց արտադրություն մեջ, դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքի և գիտակցություն աշխատանքային դիսցիպլինայի որինակ են հանդիսանում մասսաների համար: Այդ պետք է յեկակեալ ունենան կոլտնտեսային կազմակերպությունները թեկնածությունները առաջադրելիս, մասսայականացնելով նրանց, պաշտպանելով նրանց բնորական ժողովներում, ըստ վորում թեկնածուների նշման հարցերով պետք է սկսել զբաղվել անմիջապես, վորպեսզի կարելի լինի մանրազնին կերպով կռադատել նրանց և արժանավայել մարդիկ ընտրել:

Կոմյերիտական կազմակերպությունները պետք է աշխատեն, վորպեսզի կոմյերիտմիությունը ավելի մեծ ներկայացուցչություն ունենա խորհուրդներում:

Նրանք կարող են այդ անել նախ և առաջ որինակելի մասնակցություն ցուցաբերելով ընտրական կամպանիայում. քաղաքական բարձր ակտիվություն հանդես բերելով: 1930-31 թ. գյուղխորհուրդների կազմում կոմյերիտականները կազմում էին 6,4% միայն, իսկ Ուկրայնայում, որինակ, նույնիակ 5,2%

(ԱՍՖՆ Հ-ի-14, 10%), թուրք խՍՀ-ում-9, 70/0):
Հետադաշում կոմյերիտականների կազմից հե-
ռացնողներին փոխարինելուց հետո վոչ միայն
չբարձրացավ այլ նույնիսկ մի փոքր ել պակաս-
եց: ՌՍՖՆ Հ-ի 13 ծայրերկրներում ու մար-
զերում 1933թ. 2-րդ կիսամյակում խորհուրդ-
ների կազմում կոմյերիտականները կազմում
էին միայն 5, 10/0:

ԽՍՀ-ի Միության քաղաքային խորհուրդ-
ներում կոմյերիտականներ ընտրված էին
նույնպես 70/0 միայն, ավելի պակաս, քան
1929 թ. ընտրական կամպանիայում (7, 6%):
Առ 1-ր հունվարի 1934 թ. ՌՍՖՆ Հ-ի մեջ
ՀԼԿՅՄ անդամների թիվը խորհուրդներում
կազմում էր ընդամենը 5, 2 0/0 միայն: Հարկ
չկա ասել, Վոր դա չափազանց անբավարար է:

Հետեվապես կոմյերիտական կազմակեր-
պությունների խնդիրն է կոմյերիտականների
ծանրության կշիռը բարձրացնել խորհուրդնե-
րում ի հաշիվ արտադրության, կուլտ կենցա-
ղային աշխատանքի և ուսման լավագույն,
իսկական հարվածայինների, վորոնք իրա-
պես կկարողանան խորհուրդներում անցկացնել
կուսակցության գիծը, հեղինակություն են
վայելում մասսաներում: Այդպիսի կոմյերի-
տականներ արդեն չատ են կոփվել առաջին հրն-
գամյակի 1933-34 թ. ժողովրդական տնտեսու-
թյան պլանի կատարման համար մղված լար-
ված պայքարի շրջանում: Նրանցից շատերը,

վոր գյուղխորհուրդների նախագահներ են ցու-
ցաբերեցին գյուղում պրոլետարական գիկա-
տուրայի մարմինների անելիքների որինակելի
րմբոնում և 1933 թ. մրցակցությանը պարզե-
վատրվեցին իրեց աշխատանքով լավագույն
գյուղխորհուրդի համար:

Խորհուրդների տասնյակ հազարավոր ակ-
տիվիստ կոմյերիտականներ կազմակերպչա-
կան և մասսայական մեծ աշխատանք են տա-
նում խորհուրդներում, նրանց սեկցիաներում
և պատգամավորական խմբակներում պայքա-
րելով բալչեվիկյան կոլտնտեսությունների հա-
մար, կոլտնտեսականների ունեոր կյանքի հա-
մար:

Խորհուրդների ընտրությունների ժամա-
նակ նույնպես կոմյերիտականները գործունե-
ության ընդարձակ դաշտ ունեն: Նրանք պետք
է նպաստեն վարպետի բոլոր ընտրողները կազ-
մակերպված կերպով գան ընտրական ժողով-
ներին: Դրա համար անհրաժեշտ է տնե տուն
չըջագայումներ-կատարել, կազմակերպված
կերպով գնալ տվյալ ընտրական մասի ժողո-
վատեղից հեռու-ապրող ընտրողներին բերե-
լու: Հարկավոր է կազմակերպել շքերթներ,
կարնավալներ, Ֆիզկուլտուրական արշավներ
և այլն. մի խոսքով կիրառել տեղական պայ-
մաններին համապատասխան մասսայական
աշխատանքի բոլոր տեսակի մեթոդները:

Ընտրական ժողովներին կոմյերիտական-

ներն ու կոմյերիտական կազմակերպութիւնները պետք է լինեն ընտրութիւնները ղեկավարող կուս. կազմակերպութիւնների ամենահավատարիմ հենարան, հանդես գան համախմբված, հակահարված տալով դասակարգայնորեն թշնամի յելույթներին, հակախորհրդային—կուլակ տարրերին ու նրանց ձայնակցողներին խորհուրդներն անցկացնելու փորձերին, հեղափոխական որինականութիւնը խախտելու, ինքնաքննադատութիւնը խեղտելու և վերընտրութիւնները խանգարելու փորձերին:

Կարեւորագույն նշանակութիւն կունենա կոմյերիտութիւնի քաղաքային կազմակերպութիւնների գործնական աջակցութիւնը գյուղի կոմյերիտական կազմակերպութիւններին և գյուղական ընտրական հանձնաժողովներին: «Խորհուրդների վերընտրական աշխատանքն անցկացնելու շրջանում անհրաժեշտ է կազմակերպել քաղաքային շեֆարկող ձեռնարկութիւնների մասայական տղանութիւնը գյուղականներին (բանվորական բրիգադների ուղարկելը և այլն): Կոմյերիտական կազմակերպութիւնները նախաձեռնութիւն պիտի ցուցաբերեն տոցիալիստական մրցութիւնը ծավալելու, արտադրական պլանները լավագույն կերպով կատարելու համար շեֆարկող կազմակերպութիւնների կողմից յենթաշեֆ կոլտնտեսութիւնների հետ տոցիալիստական

պայմանագրեր կնքելու և գյուղում հերթական տնտեսական և քաղաքական կամպանիաներ անցկացնելու համար, նմանապես խորհուրդների վերընտրական կամպանիաները լավագույն կերպով անցկացնելու համար»: (1930—31 թ. խորհուրդների ընտրութիւնների վերաբերյալ ՀԼԿՅԵՄ-ների ԿԿ-ի վորոշումից):

Խորհուրդների ընտրութիւնները նախապատրաստելու և անցկացնելու գործում կոմյերիտական կազմակերպութիւնները իրենց բոլոր աշխատանքներում չպետք է մոռացութիւն տան մենատնտեսների շրջանում տարվելիք աշխատանքի մասին, վոր նրանք «մեր վաղվա կոլտնտեսականներն են» (Ստալին):

«Հարկավոր է, վոր մենատնտեսը չնվազեցնի մեր նվաճումները, չիջեցնի մեր հաջողութիւնները, մեզ դեպի հետ չքաշի... Հարկավոր է մոտենալ մենատնտեսին, իրել վաղվա կոլտնտեսականի, կազմակերպել քաղ. բացատրական աշխատանք ամեն մի տասը տան համար, անհրաժեշտ դեպքերում հնարավոր արտադրական ոգնութիւն ցույց տալով մենատնտեսութիւններին» (Լ.Մ. Կազանովից):

Կոմյերիտական կազմակերպութիւնները պետք է բացատրեն մենատնտեսներին ընտրական որենքը, հետևեն ընտրողների և ձայնագուրկների ցուցակների կանոնավոր կազմելուն, այն ընտրական մասերում, ուր ընտրողների մեծամասնութիւնը մենատնտեսներն են,

պետք է աշխատեն, վորպեսզի աշխատավոր մենատնտեսները հաճախեն հաշվետու-ընտրա-կան մասերում, ուր ընտրողների մեծամաս-նությունը մենատնտեսներն են, պետք է աշխատեն, վորպեսզի աշխատավոր մենա-տնտեսները հաճախեն հաշվետու-ընտրական ժողովներ. ազատ կերպով բայց առողջ քննա-դատության յենթարկեն խորհուրդների աշ-խատանքը և լայն:

Մեծ պատասխանատվություն և մեծ պարտականություններ են դրվում կոմյերիտ-միության վրա արդեն նոր խորհուրդների աշ-խատանքի առաջին իսկ քայլերից: Նրանց ան-միջական պարտականությունն է խորհրդի կոմյերտական-անդամների և խորհրդային ակտիվիստների միջոցով գործնականորեն նը-պաստել խորհուրդների աշխատանքի վերա-կառուցմանը 17-րդ կուսհամագումարի վորո-շումների խորհուրդների ղեկավարման գործի վերակառուցմանը:

Նրանք պետք է նպաստեն խորհրդային ակտիվի շարքերի ընդարձակմանը, համաձայն տեղական պայմանների ու պահանջների սեկ-ցիաների և պատգամավորական խմբակների ավելացմանը և նոր խորհուրդների ու նրանց մասսայական որգանների ցանցի աշխատանք-ների ձիշտ կառուցմանը:

Նմանապես կոմյերիտական կազմակեր

պությունները պիտի մասնակցեն խորհուրդ-ների ռայոնական համագումարների նախա-պատրաստման ու անցկացնելու բոլոր աշխա-տանքներին, վորտեղ քննության պիտի առ-նվեն տնտեսական, կուլտուր-կենցաղային և խորհրդային աշխատանքի հարցերը ռայոնա-կան մասշտաբով և ընտրվեն իշխանության ռայոնական մարմինները:

Ընտրողական կամպանիան անցկացնելու չափազանց սուղ ժամկետները պահանջում են կոմյերիտմիությունից մեծ ձկունություն, պարզորոշ աշխատանք, ուժեղ, ամենորյա աշխուժ ղեկավարություն տեղական կոմյերի-տական կազմակերպություններին, նրանց սերտ կապը գործադիր կոմիտեների և ընտրա-կան կոմիտեների հետ, կուսակցական կազմա-կերպություններին և ՄՏԿ քաղբաժինների, խորհունտեսությունների ու տրանսպորտի ու-չաղրության ուժեղացումը դեպի կոմյերիտ-միության աշխատանքը, նրա ոգնության և ընտրական կամպանիային լծվելու ստուգումը:

Այդ բոլոր պայմանները պահանջելու դեպքում, չորս ու կես միլիոնանոց կոմյերի-տական հսկան. չըջապատված յերիտասարդու-թյան բազմամիլիոն ակտիվով, հզոր լծակ կը-հանդիսանա 1934 թ. խորհուրդների ընտրու-թյունները հաջողությամբ անցկացնելու և պրոլետարական դիկտատուրայի մարմինները

քաղաքում և գյուղում նորից ամրապնդելու համար:

Սորհուրդների ընտրություններին մասնակցելը միաժամանակ կլինի հիանալի ստուգում կոմյերիտմիության առանձին տեղական կազմակերպությունների կարողությանը մարտականորեն, օպերատիվորեն լծվելու և կարեվորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաներ անցկացնելու գործում, կլինի ըստուգում նրանց ընդունելության՝ կազմակերպելու և առաջնորդելու մասսաները կուսակցության գլխավոր գծի համար պայքարելու:



6
0

son

|
|